

ուղիները դտնել ու տալել, «իմ հակառակորդներս, երբ տեսնեն այս գրքին տպագրութիւնը, ինքզինքնին պիտի կախեն» ըսելով խանդավառութեամբ:

Ալտոյ Մ. ծանօթացած է նաեւ ժամանակի մեծամեծ իշխաններու հետ, անշուշտ իր հրատարակութիւններուն համար նպաստ եւ ձեռագիր դտնելու նպատակով:

Ինքն ալ գրած է լատիներէն լեզուով բանաստեղծութիւններ, կենսագրութիւն մը Ուիլիսիոսի, լատիներէն եւ յունարէն քերականներ, թարգմանած է Եղորոսը՝ լատիներէնի, ինչպէս նաեւ Կ. Լասպարոսի յունարէն քերականը եւն...:

Ոչ միայն թիւով ու տեսակով այլ նաեւ տպագրական գեղարուեստի տեսակէտով առաջնակարգ են Ալտեան հրատարակութիւնները: Օժտուած ընտիր ճաշակով, գիտցած է ընտրել ազնիւ թուղթ, կարմիր ու սեւ մելան ու վայելչօրէն դարգարել եւ դասաւորել վերնագիրները. երբեմն նոյնիսկ գործածած է նուրբ մագաղաթներ, որոնք յետոյ կաղմուած՝ հրաշալի հատորներ դարձած են:

Այս բոլորին վրայ եթէ աւելցնենք ժամանակակից անսպառ վկայութիւնները, կրնանք առանց վարանելու Ալտոյ Մանուգիոն դասաւորել տպագրական արուեստի պատմութեան միջազգային ամենամեծ վարպետներու շարքին:



\*\*\*

Երբ այս յորեկանին առիթով կազմակերպուած լուրջ բանախօսութենէ մը վերջ բախտն ունեցայ այցելելու Ալտեան տըպագրութիւններու ցուցահանդէսը, հետաքրքրական այդ հատորները քննելու պահուս՝ կը մտածէի մեր Յակոբ Մեղապարտի մասին. չէ՞ որ ինքն ալ 1512-1513 շրջանին Վենետիկի մէջ հրատարակած է «Պարզատումար», «Աղթարք», «Տաղաբան» եւ «Պատարագատետր»:

Եթէ չենք կարող Յակոբ Մեղապարտի եւ Ալտոյ Մանուգիոյի միջեւ եղած յարաբերութիւններու դոյւլթիւնը պատմականօրէն փաստել, սակայն գոնէ պատմական աւելի լայն շրջանակի մը մէջ կրնանք զետեղել Վենետիկ երեւցած մեր առաջին տպագրական նմոյշները, չնկատելով սոսկ պատահար մը այդ եղելութիւնը: Արդարեւ մեր իմաստուն տպագրիչը զիտցել է գիմել ոչ միայն վաճառականութեան կեդրոն մը, այլ նաեւ իր օրերուն Եւրոպայի ամէնէն աւելի ծաղկեալ քաղաքը տպագրութեան արուեստին մէջ՝ Վենետիկ, ուր անշուշտ խորհրդակցելով տպագրութեան այս մեծ վարպետներուն հետ եւ անոնց օժանդակութեամբ ու օրինակով կրցած է ստեղծել Հայ տըպագրութիւնը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

## ՄԻՒԹԱՐ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

(ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ «ՍԻՈՆ»)

Միւթար այսօր խորհրդանշէ մը դարձած է երկու յստակ ու անշուշտ գաղափարներու՝ կրօնի եւ Ազգի: Յորեկան կան տարւոյն ընթացքին՝ Հայ Մամուլը գիտակցօրէն շեշտեց այն կրօնական ու գրական անհրաժեշտ գերը՝ զոր կատարած է Մեծ Սեբաստացին: Բայց այս ընդհանուր ոգեւորութեան մէջ միայն Սիոնի խմբագրութիւնն էր որ խժալուր լար մը եկաւ հնչեցնել իր Միւթարն եւ Միւթար-եաները յօդուածով (Յուլիս 1949): Յուլիսի իր 8 Սեպտեմբերի թիւով անդադարձաւ նուրբ երգիծաբանութեամբ մը այդ գրութեան շուրջ, ցոյց տալով հոն ճշմարիտ անկեղծութեան պակասը:

Մենք պատշաճ կը համարինք, սակայն, աւելի լայնօրէն մօտենալ այդ գրութեան, մանրամասն վերլուծումով մը պարզելով հոն արտայայտուած գաղափարներու անձնութիւնը՝ ի սէր ճշմարտութեան:

\*\*\*

«Հայ ժողովուրդը, կ'ըսէ «Սիոն», ուշագրաւ սրտագեղութեամբ (ընդգծումը իմէ), բերաւ եւ պիտի բերէ իր երախտագիտութեան բաժինը Միւթարի եւ Միւթարեաններու հանդէպ»: Մենք տեսանք եւ չօչափեցինք այդ սրտագեղումը առանձնական նամակներու եւ մամուլի խանդավառ արտայայտութիւններուն մէջ. բայց կը դարձանանք որ հայ եկեղեցական մը նոյն անկեղծ սրտագեղումը չունի, մանաւանդ թէ ձկտում մ'ունի արժեքագրելու այն հանրական ազգանուէր դործունէութիւնը՝ զոր ունեցած է Ս. Ղազար: Ու նախ կրօնական գետնի վրայ գիտելով հարցը՝ կը շեշտէ ազանդամուկան մտայնութիւն մը, որ աններելի է ամէն տեսակէտով: Միւթարեանները, ըստ իրեն «երկերես ու երկուց տերանց» ծառայողներ են, որովհետեւ ատոնք գտնուելով «Հոռի թաթին տակ», չէին կրնար

ուրիշ քաղաքականութիւն մ'ունենալ: Հոս կը սկսին արդէն իր հիմնական սխալները, ուր կը պակսի կրօնքի եւ եկեղեցիներու պատմութեան գիտութիւնը. ան չի կրնար բժրոնել թէ մեր կաթողիկէութիւնը կրօնական խոր համոզումի մը արդիւնք է, եւ ո'չ թէ Հոռիի պարտադրուած պահանջ մը, կրօնական խոր համոզում՝ որուն արմատները կ'երթան վերջանալ Դ. եւ Ե. դարերու եւ յաջորդ շրջաններու ողջամիտ ուղղութեան մէջ:

Այդ հիմնական սխալն առաջ կու գայ նաեւ երկրորդ մը. Հոռիի կամ կաթողիկէ դաւանանքին յարումին հետեւանքով է որ Միւթարի գրական վերածնունդն ալ «ազգային հայեցակէտէ չունեցաւ փափաքուած արդիւնք»: Ու դեռ «գրքերը՝ որոնք կը թարգմանուէին, եւ դործերը՝ որոնք կ'ուսումնասիրուէին, կը կրէին թէ՛ իրր մեթոտ, եւ թէ՛ իրր ոգի, միջնադարեան հասկացողութեան կնիքը»: Այս անձիւտ տեսութիւնը կ'ընդարձակէ լուսաբանելու նպատակով՝ երբ կ'աւելցնէ.

Ս. Ղազարը կրօնական հաստատութիւն մըն էր, ան ալ կարողիկ, հետեւաբար պիտի չկրնար անկաշկանդօրէն հաղորդուիլ դարուն քաղաքակրթիչ եւ յառաջդիմական այն գաղափարներուն որ այդ ժամանակին էր եւրոպական յառաջաւոր երկրամասերուն վրայ: Գեղեցիկ էր անտարակոյս իրենց ջանքը, վերակենդանացընելու Ոսկեդարու լեգուն, սակայն ժողովրդային լեգուի եւ զարգացման մասին նախաձեռնում մտադրութիւնները մնացին անարգասիք: Այն շրջանին երբ եւրոպան լուսաւորութեան դարու իր նուաճումները կը փորձէր, երբ գիտութիւնն ու գեղարուեստը կը հանրապարհէին, Միւթարեանները անցեալին կը դառնային, հոն մնալու համար սակայն...: Գիտական ոգիի, արուեստի ջերմութեան եւ պահանջուած լայնախոհութեան պակասը, գիրքնէ պիտի ընէր անշուշտ հեղինակը հատորնէ-



Աւարելի տգիտութիւնն էր միակ պատճառը այս տխուր կացութեան, ինչպէս Լէօ իսկ կը ստիպուի եղբակացնել:

Վճիռ է մինչեւ հոս Լէօ-ի պատճառաբանութեան ընթացքը, բայց նա ալ կը շեղի Մխիթարի սկզբունքներուն եւ ոգին ուսումնասիրութեան մէջ՝ երբ հիմնուած կեղծ նամակի մը տուած տեղեկութեանց վրայ, նամակ մը որ կը վերագրուի անմահ եւ մեծ աստուածասէր ու հայրենասէր Սեբաստացիին, կը տեսնէ անոր մէջ Հոռոմի հաճոյանալու ձկտում մը եւ անհամակիր արտայայտութիւն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներուն հանդէպ, որոնք պատճառ կ'ըլլային անհաշտ ընթացքի մը ստեղծութիւն եւ բարդութիւն: Մխիթարի եղբայրասէր հոգին ջանաց այդ պաշարի օրերուն դռնէլ եւ թելադրել հաշտութեան եղբ մը, հալածանքի եւ նախատինքի փոխարէն սիրոյ լեզուն միայն գործածելով: Իր խոր համոզումը եղած է միշտ թէ հայկական եկեղեցւոյ վարդապետութիւնը, որ կու գայ մեր հին սուրբ նախնիքներէն, յինքնան ուղղափառ իր բոլոր մասերուն մէջ, հարկ եղածին պէս հասկցուած չէ ո՛չ մոլեռանդն կաթողիկներէն եւ ո՛չ լուսաւորչադաւան կոչուած հայերէն: Ու ատկէ ահա ստեղծուած անլուծելի կնճիւղը, որ կը դաւաճանէր հոգիներու ազատութեան եւ երջանկութեան դէմ:

«Հաճոյանալ Հոռոմի» անիմաստ բացատրութիւն մը, զոր «Միտն»-ի խմբագիրն իսկ կը կրկնէ անդիտակցաբար: Ի՞նչ կը նշանակէ հաճոյանալ Հոռոմի, եւ ի՞նչ բանի համար: — Մխիթար կարիք չունէր այդ կեղծ եւ եպերեյի քաղաքականութեան դիմելու, անգոսններով իր ազգակիցները: Մխիթար իր ազգակիցներուն համար իր կեանքն անգամ զոհելու պատրաստ էր, ինչպէս հեթանոսաց առաքեալը իր ազգակից հրեաներուն համար: Եթէ Մխիթար կը հակէր դէպի Հոռոմ, այդ իր հաւատքին հիմը կը կազմէր, այն հաւատքին ու դաւանանքին՝ զոր ստացած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչէն, Մահակէն, Մեսրոպէն, Մանդակունիէն, Նարեկացիէն, Ծնորհալիէն ու Լամբրոնացիէն, մեր ուղղափառ ու աստուածաբան մեծ հայրերէն, որոնց շաւիղէն ընթանալն էր իր միակ պարծանքը եւ հոգեկան ապահովութիւնը: Մխի-

թար խորապէս համոզուած եկեղեցւոյ տիեզերականութեան, եկեղեցւոյ միութեան անհերքելի դադարախնդրուն, անտեղիտալիօրէն դժած էր իր ճամբան, որ պիտի ըլլար նաեւ ճամբան իր յաջորդներուն: Միթէ եկեղեցւոյ այդ տիեզերականութեան ու միութեան դադարախնդն մըդուած չէ՞ր որ արեւարդ խոստովանողն Գրիգոր Լուսաւորիչ՝ Նիկիոյ Ս. Ժողովին (325-ին) մասնակցութեան կը զրկէր իր որդին Արիստակէսը (Սորենացի, Պատմ. հայոց. Բ. զլ. ձթ.), որ նստի Սրբազան Պապին ներկայացուցիչներուն եւ արեւելքի եպիսկոպոսներուն հետ՝ Արիստի մոլոր վարդապետութիւնը դատապարտելու: Եկեղեցւոյ տիեզերականութեան եւ միութեան դադարախնդն չէ՞ր դարձեալ որ մեծն Ներսէսը կը ստիպէր ներկայ ըլլալ Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովին (381-ին), ուր Մակեդոնի աղանդը հերքեցին սուրբ Հայրերը արեւմուտքի (Հոռոմի) եւ արեւելքի (Սոր. Գ. զլ. լւ: Շարական. Կանոն տօնի Ս. Ներսէսի եւ Սաղայ): Միեւնոյն սկզբունքէ շարժած չէ՞ր միթէ որ Նիկիոյ ու իր աշակերտակիցները՝ Յովսէփ Պաղնացի, Ղեւոնդ եւ Կորիւն՝ Եփեսոսի սր. Ժողովին (431-ին) որոշողութիւնները բերին Հայաստան, յանձնելու իրենց վարդապետներուն Սահակի եւ Մեսրոպի, որոնք պատահութիւնը չունեցան անձամբ ներկայ դնուելու Ժողովին, ուր դարձեալ խմբուած էին արեւմուտքի (Հոռոմի) եւ արեւելքի եպիսկոպոսները (Սորենացի. Գ. զլ. կա.):

Ինչո՞ւ համար եկեղեցիներու այս սքանչելի միութիւնը, դժայցելի հաղորդակցութիւնը հոգիներու եւ մտքերու, պիտի խափանուէր յաջորդ տիեզերական ժողովներուն, ինչպէս օր. 451-ին դումարուած Քաղկեդոնի Ժողովին առթիւ: Որովհետեւ այդ թուականին հայ ժողովուրդն ու հայ կղերը իր դոյութեան պաշարը կը մղէր, ազգովին դրադած կենսական մտահոգութեամբ մը փրկելու հայ եկեղեցին պարսկադէն աղանդի սպառնալիքէն: Անշուշտ արդարացի պատճառ մը բացակայութեան, բայց ոչ երեսպարձումի, որ գործն է յաջորդ անդիտակից կաթողիկոսներու: Եւ ինչո՞ւ ազգայնացումի ձկտում մը եկեղեցւոյ դադարախնդն, զոր պաշտպանեցին Լուսաւորիչի աթոռին դահակներէն

ոմանք: Մխիթար կը հետեւէր Լուսաւորչի հետքերուն եւ իրմէ տրուած ուղղութեան. ու ձեռքին տակ ունենալով այսօրվան յայտնի ու պատմական իրականութեան մը փաստերը, որ եկեղեցւոյ տիեզերականութիւնը (կաթողիկէութիւնը) կը հաստատէ, կարելի՞ էր միթէ իրեն չյարիլ Քրիստոնէութեան կեդրոնին՝ Հոռոմի, որ բիւզանդական եկեղեցւոյ, Փոտի օրով բաժանումէն վերջն ալ, անաղարտ պահեց Քրիստոսի հաւատքին դանձարանը:

Մեր աղբը չհասկցաւ կաթողիկէ բառին իմաստը ու դայն նոյնացուց լատին յորջումին հետ: Կաթողիկէ (յունարէն՝ Καθολικός) տիեզերական կը նշանակէ, մինչդեռ լատին՝ ցեղի մը ընդհանուր անուանակոչումն է, որուն տակ կը խմբուին հոռոմական ժողովուրդէն մնացած բեկորները, ուրոյն ազգութիւններ ձեւացնելով, ինչպէս են խալացիները, Քրանսացիները, սպանիացիները: Ու դեռ աւելի ընդհանրանալով՝ այդ լատին աւելի անցաւ նշանակելու ծէսը, որ արեւմտեան Եւրոպայի ժողովուրդներու սեփական է: Ի՞նչ կը հասկնայ արդեօք Հայաստանեայց եկեղեցին՝ երբ իր աղօթքներուն եւ շարականներուն մէջ միշտ կը յիշուի «Կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի» բացատրութիւնը: Ինչո՞ւ կը տարբերի այդ կաթողիկէն՝ կաթողիկէն, եթէ ոչ զի եւ լ-ի լծորդութեամբ մը միայն: Ո՞վ չի տեսներ այս պարզ ճշմարտութիւնը: Բայց այն ատեն ինչո՞ւ մեր կէս դիտուն խմբադիրները եւ մանաւանդ մոլեռանդն եկեղեցականները այնքան ուժգին չեղտ կը դարնեն այդ կաթողիկէ բառին վրայ, չեղտ մը արդահատանքի հանդէպ այն հայերուն, որ իրր թէ հեռացած են Հայաստանեայց եկեղեցիէն: Եթէ այդպէս է, ուրեմն Հայաստանեայց եկեղեցին կաթողիկէ չէ, եւ եթէ կաթողիկէ չէ, ինչո՞ւ մեր սուրբ հայրերը իրենց աղօթքներուն մէջ անցուցած են այդ բառը՝ իրր յատկանշող ճշմարիտ եկեղեցին, որուն ծոցն ըլլալու հոգեկան երջանկութիւնն ունէին:

Կաթողիկէ կամ ընդհանրական տիեզերսը՝ մին է Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյ յատկանիշերէն. այդ տիեզերսը մնաց իսկական յատկանիշը Հոռոմի եկեղեցւոյն, յետ յոյներու բաժանումին ընդհանրականը

ներկայացնող ամբողջութենէն: Հոռոմի եկեղեցին կը կոչուի կամ կը կոչէ ինքզինքը ընդհանրական՝ ոչ թէ հոռոմական կայսրութեան մը պէս տիրապետական ձկտումներ հետապնդելով, այլ որովհետեւ իրապէս է եւ պիտի մնայ մինչեւ ցկատարած աշխարհի ընդհանրական, բոլոր Ժողովուրդներու եւ բոլոր ազգերու համար անխտիր: Յունական եկեղեցին էր որ կորսնցնելով Ս. Կիրիլի մը, Ս. Ոսկերբանի մը ջերմ հաւատքը եւ հպատակութեան հոգին, քակտեց միութիւնը Փոտի օրով, եւ այնուհետեւ դադարեցաւ իր մէջ հոգեկան ու մտաւոր կեանքը իր հին հայրապետներուն: Քրիստոսի եկեղեցին մի ալ է, միութեամբ հոգիի, հաւատքի եւ վարչութեան: Քրիստոսի հիմնած եկեղեցին չէր կրնար առանց հեղինակութեան կառավարել հսկայ զանգուածը ազգերու. այդ վարչական միութիւնը յայտնի է արդէն առաքելական դարու եկեղեցւոյ կեանքին մէջ, ինչպէս յաջորդ դարերուն արեւմտեան եւ արեւելեան եկեղեցիներու Ս. Վարդապետներուն եւ Ս. Հայրերուն ըմբռնումին եւ մեկնաբանութեան մէջ, որոնք անհրաժեշտօրէն նկատի առնուելու են երբ օր. Պետրոսի զլխաւորութեան եւ ուրիշ կարեւոր հարցերու մասին վկայութիւններ կը բերուին Ս. Գրքէն, որպէսզի մեր այսօրուան մեկնութիւնները չըլլան բանապաշտական ոգիէ առաջնորդուած:

Ըլլալ կրօնով կաթողիկէ եւ ազգով հայ, Մխիթարով քարոզուած նորութիւն մ'էր, յետ պոստր ժամանակներու կատարած աւերին՝ հեռացնելով հայ ժողովուրդը իր նախնիքներու ճշմարիտ շաւիղէն: Լէօ անգամ կը դարմանայ որ ինչպէս կառուի է չհասկնալ այս պարզ իրողութիւնը «լինել հաւատացող կաթողիկ եւ միաժամանակ նաեւ լաւ հայ»: Եւ ինչ որ Մխիթար եւ Մխիթարեանները հասկցած են եւ կը քարոզեն ի հեճուկա հակառակութիւններու, զոր կրած են անցեալին մէջ եւ կը կրեն ներկայիս: Արեւմտեան Արիստի համար ըսած է. «Պապէն աւելի կաթողիկ, եւ Հայկէն աւելի հայ» չեղտելով միեւնոյն սկզբունքը եւ իրր հաստատութիւն ու օրինակ՝ դնելով ազգայիններու առջեւ Ալիշանի անձին մեծութիւնը եւ հրմայքը: Ո՞վ աւելի հայ էր քան Ալիշանը, որ իր ո՞վ աւելի ազգասէր քան Ալիշանը, որ իր

աչքերուն լոյսը քամած է ազգային ձեռագիրներու վրայ, ու իր հոգիէն ու մտքէն հանած է տքնաժան անձնագործութեամբ Արարատ-ի, Սիսուան-ի, Սիսական-ի, Շիրակ-ի հատորները, ուր այնքան սէր կայ հայրենիքի բեկորներուն, ձեռագիր նշխարներուն եւ խաչքարերուն: Ո՞վ կըրնայ տարակուսիլ հայաստանի մասին Սիւրբ Արիւնդին, որ իր դրասեղանին վրայ հայրենիքէն բերուած ափ մը հող կը պահէր իրեն մասունքը, եւ միանգամայն ո՞վ կըրնայ տարակուսի տակ զենի անոր ջերմ կաթողիկէի հոգին, փարած եկեղեցւոյ Գլխուն, Հոռոմի սրբազան քահանայապետին: Ինչ որ էր Արիւնդի հոգին եւ ուղղութիւնը, նոյնն է այսօրուան բոլոր Մխիթարեաններունը, եւ պիտի ըլլայ նոյնը յորդ Մխիթարեաններունը ալ, որովհետեւ անոնք կը քալեն իրենց հանձարեղ Հիմնադրին զծած ուղիէն: Եթէ անցեալի մէջ եղած են Մխիթարեան զէմքեր, ինչպէս Հ. Գ. Այվազովսքի, Խորէն Նարայէյ, Ամբրոսիոս Գալֆայեան, Նորայր Բիւզանդացի, զէմքեր՝ օտուած կարողութեամբ եւ զարգացած ազգային գիտութեամբ, որոնք իրենց բովանդակ հայադիտական պատրաստութիւնը կը պարտին Ս. Ղազարի, եւ եթէ օր մը անոնք հեռանալով վանքէն, ցոյց տուած են ինքզինքնին որպէս նշմարիտ հայեր եւ Ս. Ղազարի միջնաւայրը՝ լատիմացած, անոնք սոքա ու անտեղեակ ազգայիններու աչքին փոշի ցանած են, արդարացեալ համար իրենց անկարգ վերաբերմունքը այն ծան հանգէպ, որ եղաւ անոնց մայր ու դայակ, կեդրոն հոգիի եւ մտքի ձեւաւորման: Անոնք օգտեաներ էին վանքէն, ոչ թէ որովհետեւ ճշմարիտ հայեր, այլ որովհետեւ չեղած Մխիթարի հոգիէն: Անոնց մէջ պակաս էր նշմարիտ կրօնաւորի գաղափարականը, հպատակութեան եւ խոնարհութեան ոգին, որ հիմն է վանական կեանքին: Ստիպուեցանք այս տողերը արձանագրել հոս, պարզապէս ճշմարտութիւնը եւ իրականութիւնը պարզելու համար:

Ս. Ղազար հայ է իր ոգիով եւ գործունէութեամբ, եւ աւելի՛ հայ՝ քան ուրիշ որ եւ է կեդրոն՝ որ ազգային շրջանակներու մէջ ճանչցուած է որպէս այդ՝ ու գործած: Մխիթարեաններն եղած են միանգամայն հզօր պաշտպանները Լուսա-

ւորէի, Սահակի ու Մեսրոպի լոյս հաւատքին ու վարդապետութեան, երբ ո՛ր եւ է յարձակում մը կատարուած է անոնց դէմ՝ ազգայիններէն կամ օտարներէն: Վկայ ասոր՝ Չամչեանի «Վահան հաւատոյ» եւ «Վահան ուղղափառութեան» հատորները, Աւետիքեանի «Մեկնութիւն Շարականաց»ը, եւ ուրիշ բազմաթիւ գործեր, արտագրուած այդ ուղղութեամբ: Մխիթարեաններու քէզի-ն շատ պարզ է իրենց առջեւ կանգնած են Լուսաւորէն մինչեւ Մեսրոպ, Օճնեցիէն ու Նարեկացիէն մինչեւ Շնորհալի ու Լամբրոնացի, Հայ եկեղեցւոյ ճշմարիտ ներկայացուցիչները, որ Լուսաւորէն աւանդուած ուղիղ գիծը պահպանած են. որմէ ո՛ր եւ է չեղում, - հետեւանք մարդկային անձնասիրութեան եւ կամ աստուածաբանական տկարամտութեան, - կը նկատուի անտարակոյս նաեւ չեղում մը սուրբ հաւատքի ճշմարիտ ճամբէն: Ի՞նչ իրաւունքով Մովսէս Եղիարեցի մը, Եղբ մը, կամ Եղիա, կամ Ներսէս շինող մը, կամ ուրիշներ պիտի աղարտեն լուսաւոր ընթացքը եւ վարդապետութիւնը Գրիգոր Լուսաւորէին եւ անոր յաջորդներուն, մոլորեցնելու համար նաեւ միամիտ հայ ժողովուրդը, ստեղծելով եկեղեցական ու քաղաքական ահաւոր կնճառութիւններ ու ճղնաժամային վիճակներ: Ասոնք կատարած են այդ չեղումը, որովհետեւ պակաս է անոնց գիտակցութիւնը իրենց գիրքին, պակաս է կեանքի սրբութիւնը եւ մանաւանդ պակաս է աստուածաբանական գիտութիւնը այն հարցերու մասին, որոնք այդ օրերուն կենսական էին, ինչպէս Քաղկեդոնի սուրբ Ժողովին վարդապետութեան, որուն երբեք չուզեցին անոնք մօտենալ անկեղծօրէն եւ սիրայօժար: Ու ազգային եկեղեցիի մը մղձաւանջէն տուրուած, հեռացան ու մեկուսացան կամաց կամաց տիեզերական եկեղեցիէն, որուն փոքրիկ մէկ մասը, փոքրիկ՝ բայց գեղեցիկ մէկ ածուն պիտի ըլլար մերինը, արդիւնաւոր՝ անհամար մարտիրոսներու լուսապսակներով: Մեկուսացումը քայքայեց զայն ու տարաւ նեանց անորոշ ու տարտամ ուղիներու վրայ, այնքան որ ժողովուրդին մէկ մասը զոհ տուաւ նոյնիսկ անտարբերութեան գիրկը: Չպակեցան սակայն, զանազան ժամանակներու մէջ՝

փորձեր միութեան ու համերաշխութեան. ամէնէն վերջինն է 1810-1820-ին կատարուածները, երբ Պոլսոյ մէջ մեծն Չամչեանի նախաձեռնութեամբ կը յուղուէր հրատապ հարց մը սիրոյ եւ եղբայրութեան, վերջ տալու համար զայնակողական ընթացքին, որ իրարու դէմ հանած էր միեւնոյն ազգին զաւակները: Այդ շրջանին է որ Յովհաննէս պատրիարքը՝ ցոյց տալու համար իր գիտակից ու համերաշխ ոգին, կ'արդիւնէր երգել եկեղեցիներու մէջ «Ով հրաշալի»-ին կցուած յետսամուտ երեք տունները, ուր կը նղովուէր Ս. Լեւոն քահանայապետը: Բայց աւա՛ղ, այդ գեղեցիկ երազը միութեան՝ չիրականացաւ, ու տխուր կացութիւնը շարունակուեցաւ եւ կը շարունակուի մինչեւ այսօր:

Ինչպէս բաժանումի տխուր օրերուն, այսօր ալ կ'ըսեն թէ՛ Ն դարուն հայ եկեղեցին ազգայնացաւ. որովհետեւ Քաղկեդոնի ժողովին պատճառաւ բաժնուեցաւ ընդհանրականէն: Սակայն չե՞ն խորհիր որ աստուածաբանական գեանի վրայ ամէնէն ծիծաղելի ու յախնիքոր սխալն է որ կը հրապարակեն: Քրիստոսի եկեղեցին ազգայնութիւն չի ճանչնար, բոլոր հաւատացեալները, ինչ ազգի ալ պատկանին անոնք, ամէնքն ալ եղբայրներ են ի Քրիստոս, սիրով եւ համերաշխութեամբ միացած իրարու, միեւնոյն շնորհքի ալիէն խլմելով, միեւնոյն հաւատալիքները ունենալով, եւ ձկնուած միեւնոյն վախճանին: Ոչ ժամանակը, ոչ քաղաքական պայմանները, եւ ոչ ալ բովանդակ ազգի մը կամքը՝ կրնան արդարացեալ այդ հեռացումը եւ տալ ազգային տիտղոսը: Որովհետեւ Քրիստոս ինքն է հիմնադիրը եկեղեցւոյ, ոչ թէ ազգերը եւ կամ անհատները: Հետեւաբար սխալ է այն ըմբռնումը որ կը դարձնէ եկեղեցին ազգային կազմակերպութիւն մը եւ կամ ժամադրաւայր մը: Միթէ նուա՞ղ ազգային էր հայկական եկեղեցին Սահակ-Մեսրոպի օրով, երբ ամէն ինչ՝ Եղիարեցի, Աստուածաշունչի թարգմանութենէն, ծիսական ու աղօթական բոլոր մատենաները հայացան, ու մենք խաւապէս ազգային գիտակցութիւն մը ունեցանք. բայց միւս կողմէն անձատուածի, բաժանումի գաղափար մը երբեք չեկաւ հեռացնելու հայ եկեղեցին բնականապէս:

Նէն եւ ընդհանրականէն: Այս է ճշմարիտ ըմբռնումը հայկականին եւ ազգայինին՝ որ կը կայանայ ծէսի, լեզուի տարբերութեան մէջ բոլոր միւս քրիստոնէայ եկեղեցիներէն՝ որ միացած են ընդհանրականին: Եթէ ազգային է հայ եկեղեցին «Սիոն»ի վարդապետութեան համաձայն, աւա՛ղ, այն ատեն պիտի ըսենք թէ Քրիստոսի եկեղեցին հետ կապ չունի, եւ ոչ բաժնի անոր թագաւորութեան մէջ: Տխուր է հետեւանքը: Բայց «Սիոն» եւ Սիոնականները իրաւունք չունին աղարտելու ճշմարիտ գիմաղիժը Լուսաւորէի եկեղեցւոյն:

Հիմնական սխալը՝ Կրօնքի ըմբռնումին մէջ է. կրօնքը ըմբռնուած իրեն ազգութիւն, իրեն անոր հետ «չազգահիւսուած» բան մը, անկէ անանջատելի իր էութեան մէջ, պատճառ կ'ըլլայ այն հետեւութիւններուն՝ որոնց կը հասնի «Սիոն»ի խմբագիրը: Կրօնքը, - խօսելով յատկապէս քրիստոնէութեան մասին, - աստուածային հիմ ունի, մինչ ազգը իր բնագոյնական առումին մէջ՝ ցեղային տարբերութիւններու վրայ հիմնուած է եւ կապուած ժողովուրդներու բազմադարեան պատմութեան հետ: Ազգերու զանազանութիւնը երկրի, կլիմայի, սովորութիւններու եւ լեզուի վրայ հաստատուած է. զայն կրօնքի հետ նոյնացնել՝ կը նշանակէ չորսթեղ երկու հապէս տարբեր իրականութիւններ: Ազգի գաղափարին հետ կապուած է, անշուշտ, գրականութիւնը, պատմութիւնը, մշակութիւնը, մինչ կրօնքը կը ձկտի ուրիշ գերբնական վախճաններու, ինչպէս է մարդկութեան բարոյականութիւնը, մարդուն կապը իր Ստեղծողին հետ, հոգիներու փրկութիւնը յաւիտենական կեանքին համար, - բան մը որ բոլորովին կը տարբերի ազգի կամ ազգութեան մտադրած վախճանէն:

Կրօնքի եւ ազգի գաղափարները, սակայն, եթէ իրարու մէջ «չազգահիւսուած» մէկ ամբողջութիւն մը չեն կազմեր, իրարու հետ անբնչութիւն չունին, բայց ներքստապէս զիրար ալ հերքող տարբեր չեն: Այդպէս ըմբռնած էր Մխիթար, եւ որուն ողջամիտ սկզբունքը դժբախտաբար հասկըցուած է նոյնիսկ «Սիոն»ի խմբագրէն: Եթէ պահ մը ենթադրենք որ կրօնքը ազգութեան, գրականութեան, ազգային բարեբերու, արուեստի, մշակութի

հետ սերտորէն կապուած տարր մ'է եւ զայն պահպանողը, ինչպէս կը կարծէ «Սիւն», ա'յն ատեն պէտք է դադրի իր դերը եւ գոյութիւնը հոն, ուր Պետական կազմակերպութիւն մը զայն լիովին արդէն կ'ամրացնէ ու կը պահպանէ, ինչպէս այսօր Սովետական Հայաստանի մէջ, որ միակը կը բաւէ առանց կրօնքի եւ կրօնականներու օժանդակութեան՝ ամուր պահելու մեր բնիկ սովորութիւնները, դրականութիւնը: Բայց այդ պայմաններու մէջ ալ, կրօնքը ըստ ուղիղ ըմբռնումի, պէտք է դարձեալ շարունակէ իր գործը, քանի որ ուրիշ է իր վախճանը՝ զերբնական եւ աստուածային: Կրօնքի այդ թերի ըմբռնումէն առաջ կու գայ հետեւարար ազգային եկեղեցիի մը մտայնութիւնը՝ հակառակ Աւետարանի, հակառակ մեր Ս. նախնիքներու, եւ մանաւանդ Ս. Լուսաւորչի, Սահակ-Մեսրոպներու վարդապետութեան:

Կ'ենթադրենք թէ կան տակաւին ուղղամիտ անձեր որ կը խորհրդածեն թէ ի՞նչ քան սին պատճառներու համար այսքան կը տառապինք ու կը տառապեցնենք ժողովուրդին հակայ զանդուածը, որ թերեւս աւելի ողջամիտ է քան իր առաջնորդները, սակայն անկարող ինքնաբերաբար քայլ մը առնելու: Կ'զերը կը կրկնէ. «Մենք չենք հեռանար Լուսաւորչի դաւանանքէն» առանց հասկնալու թէ ի՞նչ անհեթեթ հակասութեան մէջ է: Լուսաւորիչ չունի առանձին դաւանանք, որ տարբեր ըլլայ տիեզերական եկեղեցւոյ հաւատքի դաւանութենէն. կարդացէք «Ազաթանդեղոս»ը կամ «Յաճախապատում»ը, որոնք աւանդութեան համաձայն կը վերագրուին մեր սուրբ Հօր. անոնց մէջ ան կը քարոզէ խաւապէս կաթողիկէ հաւատքը իր բոլոր մասերուն մէջ: Ուսումնասիրեցէք մանաւանդ իր վերաբերմունքը Կեսարիոյ մետրապոլիտութեան, Բիւզանդիոնի եւ ընդհանուր տիեզերական Եկեղեցւոյ հանդէպ, իր սիրայով մասնակցութիւնը Նիկիոյ Ս. Ժողովին՝ առաքելով իր որդին Արիստակէսը, ինչպէս ըսինք վերեւ, եւ պիտի տեսնէք որ այսօրուան կաթողիկէ հայերն են հարապատ դաւանները Ս. Լուսաւորչին, հետեւարար կաթողիկէներն են նաեւ հարապատ լուսաւորչականները:

Սխալ ենթադրութիւն մ'ալ սա է՝ թէ

կաթողիկէ կրօնքին հետ անհաշտ են ազգ եւ հայրենիք գաղափարները: Այս վարկածին անհիմն ըլլալը կը փաստեն եւրոպական ազգերու ինքնուրոյն իրրեւ ազգ գոյութիւնը, եւ անոնց պատմութեան մէջ կաթողիկէ զինուորականութեան կատարածը ի սպաս իրենց հայրենիքին. Փրանսացի մեծ զօրավարները ամէնէն ջերմ կաթողիկէներն էին եւ են: Մխիթարեաններու ազգասիրութիւնը թող օրինակ ըլլայ, թէ ի՞նչպէս կրնան հաշտուիլ իրարու հետ Կրօնքն ու Հայրենիքը:

Թէ Մխիթարեանները ինչ աստիճան գնաւորիտ հայեր են, «Սիւն»ի խմբագիրը պիտի տեսնէ զայն անոնց զործունէութեան մէջ, որուն կ'անցնինք յաջորդ մասերով:

#### Բ. — ՄԽԻԹԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մխիթարեան գրական վերածնունդը, կ'ըսէ «Սիւն», միջնադարեան հասկացողութեան կնիքը կը կրէ. այսինքն Մխիթար հակառակ լուսաւորութեան դարուն ստեղծած յեղափոխական շարժումին ու բերած նորութիւններուն գիտական մարդերուն մէջ, դարձուցած է աչքերը հին ձեռագիրներուն, անցեալին, մնալու համար հոն:

Անխմաստ, անճիշտ ու անգիտակից արտայայտութիւն՝ ուր կը պակսի ճշմարիտ հասկացողութիւնը Մխիթարեան վերածնունդին: Նախ քան հերքումը, ճշտենք որ այս կէտին մէջ ալ, ինչպէս ըսինք, «Սիւն»ի խմբագիրը կը հետեւի Լէօ-ի շուրջ կէս դար մը առաջ յայտնած գաղափարներուն: Լէօ աշխարհական մ'էր. ներքի էր թերեւս իր մօտ կրօնքի, հաւատքի, եկեղեցական վարդապետութեան անգիտութիւնը, բայց երբ եկեղեցական մը կը համոզուի ու կ'իւրացնէ այդ ազատամիտ հայ քննադատին տեսութիւնները, եւ կ'ունենայ յանդգնութիւնը կրկին անգամ հրապարակելու զանոնք, աններելի յանցանք մ'է իրեն համար այդ քայլը:

Բայց նախ քննենք Լէօ-ի վարկածները: Լէօ Մխիթարի կատարած գործը կը գտնէ հակառակ իր սպրած դարու մտայնութեան ու գաղափարներին: Ըստ իրեն Մխիթար պէտք էր հայ հոգին վրայ փոխադրել ժէ-ժէ դարերու Լուսաւորութեան

ձկտումները, փրկիստփայութիւնը, հոգեբանական, փորձառական եւ ընկերային գիտութիւններու բովանդակ յեղաշրջումը:

Լուսաւորութեան դար կը կոչուի այն շարժումը՝ որ սկսաւ Փրանսիա Պաքոնի հակումով դէպի փորձառական գիտութիւնները, որոնցմով ծայր առաւ Հոգեբանութեան հակումը՝ ժխտելու հոգեգէտականները, իմացականութեան հոգեգիտութիւնը՝ ամէն ինչ վերածելով նիւթի եւ մեքենական կազմի, Լոքի եւ Պէրքլէի իմաստասիրական դրութիւնները՝ հաստատուած բանապաշտութեան վրայ, եւ հոսի Դաւիթ Եռմի սկեպտականութիւնը՝ որով կը ժխտուին իմացական եւ հոգեկան արժէքները: Այս շարժումը որ ծրնաւ Անդլիա, մտաւ Փրանսա Պէյլի «Պատմական — Քննադատական Բառարան»ով, ուր յայտնի էր անուղղակի պայքար մը կրօնքի դէմ: Իր ազդեցութիւնը մեծ եղաւ յետոյ Հանրագիտականներու՝ Մոնթէսքիէի, Տիւրբոյի, Վոլթեյի, Ժան-Փաֆ Բուսոյի, որոնցմով այդ բանապաշտական գաղափարները կը ծաւալէին եւ կը դառնային տիրական:

Ի՞նչ էր անոնց բերածը մարդկութեան համար. ուրիշ ոչինչ՝ բայց եթէ մտաւորական յեղափոխութիւն մը ընկերային եւ նոյնիսկ քաղաքական հին կարգերուն եւ միապետական հեղինակութեան դէմ, յանուն ժողովրդի ազատութեան, այնպէս որ յետ մահուան Լուդովիկոս Ժ. Ի.՝ այդ շարժումը տիրեց հրապարակին: Քաղաքական վարչաձեւի հարց չէր միայն. ընդհանուրի մէջ ձկտում մ'էր դէպի լայն աստուածութիւնները ամէն բանի մէջ: Յաղադատական գրողէտները, ինչպէս Մոնթէսքիէի եւ Վոլթեյի, որոնք կծու երգիծաբաններ էին միանգամայն, կը հեղինակէին մէն ինչ որ իր վրայ կը կրէր հնութեան հեղինակութեան ձայն, ընկերային եւ եկեղեցական հարցերու մէջ անխորաբար: Կը շարժանջէին ազատութիւնը դրականութեան, արուեստի, հասարակ, կրօնական կեանքի. կատարեալ ընդլայնում մը այդ բոլորին դէմ, մանաւանդ եկեղեցւոյ եւ անոր հեղինակութեան: Անոնք, ինչպէս որ կը ջանային ձերբազատել զԼուսաւորութիւնն ու արուեստը դրաքննութեան հակողութենէն, այդպէս ալ կրօնքը

եկեղեցւոյ հեղինակութենէն: Ամէն մարդ տէր պիտի ըլլար իր հաւատալիքին, ինչպէս տէր էր իր մտքին ու գրածին, հետեւաբար լոկ ազատախոհ բանը՝ պիտի ըլլար առաջնորդը ամէնուն եւ ամէն բանի մէջ: Ահա վերջին եղրակացութիւնը Լուսաւորութեան դարու ստեղծիչ փրկիստփայ գրողէտներուն:

Այսպիսի ընդհանուր յեղափոխական շարժումին դէմ Եկեղեցւոյ զիւրքը պիտի ըլլար բնականաբար հակապայքար մը, ի պաշտպանութիւն այն աստուածային ու դարաւոր ճշմարտութիւններուն, որոնք նուիրական էին իրեն, որոնց ժխտումով այնքան վնաս պիտի պատճառուէր նաեւ հաւատացեալ հոգիներու: Ազատութեան պայքարին դուռն մնաց հոսի երկարակեաց Վոլթեյի, ամէնէն կծու, չարաթոյն լեզուն, որ յանդգնած ըլլայ արհամարհել ու ծաղրել սրբազան ճշմարտութիւնները, եկեղեցական սրբութիւնները, քանդելով, հրդեհելով ամէն ինչ, դիւային քրքիջով մը ամէնէն վերջ ծիծաղելով այդ բոլոր կատարած աւերին վրայ: Քանթ, Ֆիխտե, Ելլինկ, Հէկէլ, թէեւ փրկիստփայական հակոտնեայ դրութիւններու ստեղծողներ, միեւնոյն ազատախոհական շարժումին ծաւալողներն եղան Գերմանիոյ մէջ եւս: Միայն Իտալիան էր այդ օրերուն, որ իր ծոցէն հանեց աւելի հաւասարալիւ մտքեր, որոնց վրայ զեղարուեստի շնորհը կը փայլի. մարդկային ազատութեան մղձաւանջը՝ որ կ'ենթեր Անդլիոյ եւ Փրանսայի մտաւորական առաջնորդները՝ հոս քաղաքական անկախութեան գեղեցիկ շարժումը ստեղծեց, որուն շնորհիւ շարժումը ամէն ինչ իր բանաստեղծները՝ հրահրողներն էին իր բանաստեղծները՝ Ալֆրէդի, Փարինի, Մոնթի եւ ուրիշներ, որոնց քով Վոլթեյեան չափազանցութիւնները ու հակաեկեղեցական յայտնի պայքարը բացակայ են: Այնուհանդերձ Ֆէրենէի ծերուն գիւշտունը գաղափարներու փոթորիկը՝ գործեց աւերներ նաեւ Իտալիոյ մէջ, զօրացնելով ազատախոհներու խմբակ մը, նպաստող բողոքական շարժումին:

\*\*\*

Արդ, ի՞նչ կործանարար դեր կատարած պիտի ըլլար Մխիթար, կործանարար հայ հոգիին, հայ մտքին, հայ սրտին համար՝

եթէ Անգլիական-Ֆրանսական վերածնունդի շարժումը, Լուսաւորութեան դարու այդ ահագին, վիշապաշունչ յեղափոխութեան վարդապետութիւնը եւ փիլիսոփայութիւնը փոխանցէր հայ ժողովուրդին: Միւս կողմէն լուսամբիւ հայրը հայկական վերածնունդին, փրկեց մեզ այդ ահաւոր կործանումէն: Լէօ իր անդիտակից քննադատութեամբ կը պահանջէր որ Միւս կողմէն, Եւրոպայի բարոյագէտ յեղաշրջող «նոր մարդարէններու» դործերը թարգմանէր: Ի՞նչ խելախ եւ անմիտ պահանջ. տակաւին իր լեզուին քերականական տարրերը չգիտցող հայ ժողովուրդը ի՞նչ պիտի սորվէր Մոնթէսքիէոյի, Ժան-ժաք Ռուսոյի, Վոլթեռի, կամ Լոքի գործերէն, ուր անտարբերութիւն, անասունացութիւն, կը բռնէր հեղինակը, ընկերային կարգերու դէմ կատաղի յարձակում մը միայն կայ. ի՞նչ պիտի սորվէր հայ ժողովուրդը Քանթէն, Ֆիխտէն կամ Հէկէլէն. վերանցական (transcendentale) փիլիսոփայութեան մը տարրերը, որոնցմով կը խմորուէր ժըրմոնացի Աստուծոյ գոյութեան եւ հոգւոյ անմահութեան հիմնական դադափարները:

Միւս կողմէն, որ խորագէտ ճանչցած էր իր ազգը եւ անոր կարօտութիւնները, չէր կրնար խորհիլ Լէօ-ի պէս, եւ ողորդել հայ ժողովուրդի անպատրաստ մտքին անդաստանը վտանգաւոր դադափարներու սերմերով: Միւս կողմէն իր առջեւ ունէր ժողովուրդ մը՝ անտեղեակ իր լեզուին եւ իր նախնեաց թողած մատենագրական հարստութիւններուն, անտեղեակ իր անցեալին, կրօնապէս չարքերկուած ներքին երկպառակութիւններով, բարոյագէտ ու ժալքուած ու վայրափառ զանազան դաղթափայլերու մէջ, առանց հայրենի դրօշի մը քաղցրութիւնն ու հպարտութիւնը ունենալու:

Միւս կողմէն հայ մտքի չէնքը պիտի կանգնէր, որուն հիմքը չէին կրնար բլլալ լուսաւորութեան դարու սկզբունքները. աղբիւր դաստիարակութեան համար յղացած էր հսկայ ծրագիր մը, որուն համար սա-կայն իր անհատի ուժերը չէին բաւեր: Պոլիս ու Մեթոն վերջնական կայանները չկրցան դառնալ այդ մեծ հայու դադափարական ձեռնարկին, որ խաղաղ վայր կը փնտռէր կաղմակերպութիւն, դործի

անցնելէ առաջ: Միայն Վենետիկ ու Վենետիկեան Հասարակապետութիւնը տուին հզօր պաշտպանութիւն եւ բարոյական զօրակից: Ամէն ինչ կարգաւորեալ, պատրաստուած պիտի գիտէր իր նպատակին: Մէկ օրէն միւսը Միւս կողմէն չէր կրնար բռնեղծել աշխարհի շարժումը, որ հայ ժողովուրդը հրաշքով մը կերպարանափոխուէր: Առաջին մտահոգութիւնն եղաւ վերանորոգել լեզուն: Այս կէտին մէջ իմաստուն Հիմնադիրը երկու ուղղութեամբ ձեռնարկեց դործի. նախնեաց լեզուի մաքրութեամբ երկաթեայ դարերու ժանդե-րէն, որուն ապացոյց է իր «Հայկազեան Բառարան»ը, եւ ժողովրդական-աշխատաւոր լեզուի ծաւալումով՝ որուն համար յօրինեց քերականութիւն մ'ալ: Այդ աշխատանքները աշխարհային դրական լեզուն չէր եւ չէր ալ կրնար բլլալ, այլ սկզբնաւորութիւն մը միայն, որ հետզհետէ պիտի դարձնար ու դառնար տիրական: Երկրորդ մտահոգութիւնը Միւս կողմէն՝ աղբիւր կրօնական տգիտութիւնն էր, ա՛յնքան աւաղելի: Եկեղեցականներու մօտ մանաւանդ պակասած էր հաւատքի ոգին, պակասած էր բարոյականը. ասոնք կը պայքարէին իրարու հետ, փառքի եւ պատիւի հետամուտ՝ իշխանական աթոռներ խլելով իրարու ձեռքէն: Վանքերու մէջ շիջած էր ուսման լոյսը, դադարած էր կեանքը այն վանական կեդրոններուն մէջ՝ որ երբեմն փարոսներ տուին հայ ժողովուրդին: Մը-խիթարի պէս սրբակեաց ու զիտուն վարդապետ մը չէր կրնար հանդուրժել հոգեւորականներու այդ անկեալ վիճակը. ծըրպարած էր հետեւաբար հասցնել ազգին զիանական եւ սուրբ վարդապետներ, կաղմելով անոնց հոգին ու միտքը: Բայց ի՞նչ պէս, Լոքին փիլիսոփայութիւնը թէ Վոլթեռի հակակրօնական վէպերն ու պատմը-ւածքները տալով անոնց ձեռքը, արդեօք Ժան-ժաք Ռուսոյի Էմիլը, թէ Մոնթէսքիէոյի Պարսկական նամակներն: Ասոնք հեղինակներն էին բարոյական, իրաւական կարգերուն եւ ծաղրանք հոգեւորականութեան: Միւս կողմէն դարձաւ այս, անցեալին. ու Լէօ-էն ու «Սիոն»ի խմբագրէն այնքան անարդուած միջին դարը տուած էր հանձնարեղ մտքեր՝ կրօնքի եւ քրիստոնէական փիլիսոփայութեան ու աստուածաբանութեան անհրաժեշտ հիմքերը

ամբարաղնող, յետ Ս. Հայրերու դործե-րուն, որոնք կարգացուած եւ ուսումնա-սիրուած էին անոնցմէ: Մեծն Ալպերտ եւ իր աշակերտը Թոմաս Ագուսինացին՝ մի-ջին դարու համալսարաններուն լուսաւոր վարդապետներ, իրենց առողջ ու անկողմ-նակալ հոգիով մտքերու ձեւաւորման լայն ու աստուածային ուղին եղան: Լէօ եւ «Սիոն»ի խմբագիրը որ դադափարն իսկ չունին թէ ի՞նչ է անոնց արժէքը, բնա-կանաբար մոլեռանդօրէն պիտի արհամար-հէին Ս. Հայրերու խորիմաստ մեկնիչ ու աստուածաբանական դիտութիւնը սխալ-մաքիւք ոճով մեղի տուող այդ հսկայ փի-լիսոփայ-աստուածաբանները, որ եղան Մեծն Ալպերտ ու Թոմաս Ագուսինացին: Բայց Միւս կողմէն իր ըրածը. ինքը կ'ուզէր շինել հոգիները եւ պատրաստել ճշմարիտ հոգեւորականներ. իր այդ ծրա-գրին միջոցները կու տային ահա այդ հանձնարեղ մտքերը. հետեւաբար կարգաց, ուսումնասիրեց ու թարգմանեց անոնց գործերը եւ աւանդեց իր աշակերտներուն: Անոնց վրայ աւելցուց ազգային Ս. Հայ-րերու վարդապետութիւնը, որ ոչ մէկ կերպով կը հակասէր անոնց, եւ այսպէս ամբողջական ծանօթութեամբ կը հարըս-տացնէր իր աշակերտներու մտային պա-շարը, որոնք կրնային ներկայանալ ազգին որպէս լուսաւոր առաջնորդներ, ինչպէս որ կը կոչէին զանոնք իրենց ժամանակա-կիցները, ժողովուրդն ու լուսաւորեալ դասը կը երականներու:

Միւս կողմէն Յովհաննէս Որոտնեցի մը չէր, կամ մանաւանդ Գրիգոր Տաթևացի մը. վերջինս իր «Գիրք Հարցմանց» գոր-ծին մէջ, օգտագործելով սփոյաքիք եղա-նակը տրամաբանական արուեստի (որով-հետեւ ինքն ալ կրած է միջին դարու այդ մեծ շարժումի ազդեցութիւնը) կը պայ-քարէր կաթողիկէ եկեղեցւոյ վարդապե-տութեան դէմ: Մինչ Միւս կողմէն որպէս «Լուսանորդ», որպէս վե-րա ծնող հայոց նախկին սուրբ հաւատքին, այնպէս ինչպէս էր Ս. Լուսաւորչի օրերուն եւ ա-նոր յաջորդներուն, ընդհանրական Եկե-ղեցւոյ բարձրագոյն աստուածաբաննե-րուն գիտելով՝ կը գտնէր հաստատութիւն ու գիտելիք ու դաւանանքին, որ հա-նարակաց էր Աթոռներուն, Ոսկերեան-ներուն, Օգոստինոսներուն, Լուսաւորիչնե-րուն, Բարսեղներուն, Օճնեցիներուն, Նարե-կացիներուն, Ներսէսներուն: Ահաւասիկ այդ էր որ ան կ'ուզէր փաստել իր ազգակից-ներուն, երբ տակաւին պատանի, հակա-ճակատը ձառնադիրներու եւ Յայաժա-ւուրքներու վրայ, կը քննէր եկեղեցա-պատմական ու աստուածաբանական հար-ցեր, տիեզերական ժողովներով հաստա-տեց իր վանական եկեղեցիներու մի-ուած կապեր զանազան եկեղեցիներու մի-ջեւ: Այդ լուսաւոր գիրքը (թէ եւ ինքը ծը-նեցեալ հայապատանի զանազան վանքերը, ի չընէր Հայաստանի զանազան վանքերը, ի չընէր Հայաստանի արհամարհանքի ու նախադիմիքի, ինչպէս Կիւրոսի մէջ Ս. Մակարի աղան-դաւոր արեղաներէն: Իր աշակերտները, զամբոլ արեղաներէն: Իր աշակերտները, ընդհանրելով իր բերնէն աստուածային վարդապետութիւնը եկե-ղեցիներու միութեան եւ կաթողիկէ հա-ւատքի ճշմարտութեան, կը դառնային ա-ստուածաբան մեր նախնեաց ու տիեզերական խոյաններ մեր նախնեաց ու տիեզերական եկեղեցւոյ ուղիղ դէմ: Զօրացնելու հա-մար յետոյ գիտութեան հետ նաեւ վարքի սրբութիւնը՝ տուած էր անոնց ձեռքը հո-գեւոր մատենաներ, ինչպէս Թովմայ Գեմ-բաղի «Յաղագս նմանութեան Քրիստո-սի» ոսկեղինիկ գրքովը, որուն վրայ կը ծիծաղի Լէօ, եւ անշուշտ «Սիոն»ի խմ-բագիրը. բայց քրիստոնէական սրբութիւ-նը հասարակաց է, թէ եւ դայ անիկա օ-տար կամ հայկական ազգիւրէ:

Միւս կողմէն իշաւ ասպարէզ նաեւ անձնա-կան հեղինակութիւններով, պայքարելու համար կրօնական քանոն տգիտութեան դէմ: Ահա ժողովուրդի, ահա մանաւանդ Մատթէի Աւետարանին մեկնութիւնը, եւ անոր աստուածասէր ու աստուածա-լամ անոր աստուածասէր ու աստուածա-լամ հոգիէն, դործ՝ արժանի Եկեղեցւոյ բան հոգիէն, դործ՝ արժանի Եկեղեցւոյ սուրբ վարդապետի մը, որ Աստուծոյ փառքը կը փնտռէ, աստուածային յայտ-նել կ'աշխատի ու ցոյց տալ միանգամայն իր ազգակիցներուն՝ եկեղեցւոյ վարդա-պետութեան ճշմարիտ ուղին վիճուած պետութեան ճշմարիտ ուղին վիճուած հարցերու մասին, զննելով անոնց առջեւ իր յստակ լուսաբանութիւնները: Նոյն հո-գիով եւ նոյն նպատակով Զամբան տուաւ իր «Սաղմոսաց մեկնութիւն»ը, «Նուագա-րան Օրհնութեանց»ը, Աւետիքեան «Նա-

բեկլուծ»ը, «Պողոս առաքելալի ԺԴ. Թղթոց մեկնութիւն»ը, «Բացատրութիւն շարականաց»ը, «Ճառ բնական Հոգւոյն Սրբորոյ», «Օգոստինոսի՝ Յաղագս քաղաքին Աստուծոյ» զործին թարգմանութիւնը, «Dissertazione sulle correzioni dei libri ecclesiastici armeni» ի պատասխան Բարսեղ Հայտաւան քահանայի մը, որ կը յանդգնէր սրբագրել նախնեաց ծիսական գրքերն ու աղօթքները: Ահա Աւգերեանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց»ը, ուր Հայ Տօնացոյցի սուրբերու վարքերուն քննական ուսումնասիրութիւնը կու տայ մեզի, սրբութեան եւ կատարելութեան մղում տալու համար ժողովուրդին ու մանաւանդ կղերին մէջ. իր եղբոր Հ. Յ. Աւգերեանի «Դաւանութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց»ը, ու զեռ բաղմամբիւ արտադրութիւններ որ կը ձկտին միեւնոյն վախճանին:

Վերածնունդի երրորդ ուղղութիւնն էր նախնեաց ձեռագիրները համել լոյս աշաշխարհի, ծանօթացնել Հայ ժողովուրդին իր հին մատենագրական արժէքները, ծանօթացնել մանաւանդ իր ազգային պատմութիւնը՝ կապելու համար զայն զեռ աւելի իր ցեղի ոգւոյն ու հայրենի հողին: Այդ ամէնը կատարեցին Մխիթարի աշակերտները:

Մեթոտիկ աշխատանքով մը, յետ իրենց Հիմնադրին՝ Աստուածաշունչի զեղարուեստական հրատարակութեան, ի լոյս ընծայեցին Ոսկեղարու ոսկեղինիկ լեզուով Հայացուած Ոսկերեանի ձառերը, Ս. Գր. Լուսաւորչի Յաճախապատումը, Յ. Մանդակունիի ձառերը, Ազաթանդեղոսի, Եղնիկի, Կորիւնի, Եղիշէի, Մ. Սորենացիի, Դ. Փարպեցիի, Դաւիթ Անյաղթի, Նարեկացիի, Արիստակէս Լաստիվերոցիի, Ներսէս Ծնորհալիի, Ներսէս Լամբրոնացիի, Գր. Տղայի զործերը, որոնց մէջ ամփոփուած է Նախնեաց մտածութիւնը, կրօնական վարդապետութիւնը եւ գրական գեղեցիկ էջերը:

Չուզենթաց այս մատենագրական հրատարակութիւններուն՝ Մխիթարեան վերածնունդի կաճառը պատրաստեց Նար Հայկազեան Բաղարանը, զորք «Երեց վարդապետաց», ահադեմական լուրջ աշխատութիւն, ուր մինչեւ 1837 թուականը յայտնուած հայ լեզուի բոլոր բառամթերքը

կայ ստուգարանական քննութեամբ եւ զանազան վկայութիւններով հաստատուած հայ մատենագիրներէն. հսկայական զործ մը՝ որուն վրայ մինչեւ օրս իսկ եւրոպացի հայագէտներ կը սքանչանան եւ կ'օգտուին անոր լեզուական նուրբ դիտողութիւններէն: Միաժամանակ լոյս կը տեսնեն Քերականութիւնները մին միւսին ետեւէն, արդիւնք նախնեաց հարազատ լեզուի ուսումնասիրութեան. Չամչեան, Աւետիքեան, Բագրատունի կու տան աղբիւրն ամէնէն կատարեալ քերականութիւնները, հիմնական զործեր՝ որոնց գիմած են ուրիշներ՝ երբոր նման աշխատութիւններ կատարել փորձած են:

Հասած էր ժամանակը որ Չամչեան բանար բովանդակ պատմական անցեալը Հայ ժողովուրդին առջեւ, ծանօթացնէր անոր՝ իր ազգային պատմութեան փառապանծ եւ տխուր էջերը, ազգասիրութիւնը զեռ աւելի հրահրելու: Այդ զործը, երեւցած 1784-86-ին, զոր Լէօ Ինքնին կ'անուանէ «ԺԼ. զարու գրական կոթողը», հայոց քննական պատմութիւնն է, ուսումնասիրուած հայ եւ օտար աղբիւրներու լոյսին տակ, համայնական տեսութիւն մը հայ ժողովուրդի ծագումէն մինչեւ իր օրերը, հանդերձ եկեղեցական ու քաղաքական կեանքի բոլոր դրուագներով: Այն խանդավառութիւնը, որով ազգը ողջունեց Չամչեանի աշխատութիւնը՝ չնորհաւորական թղթակցութիւններով, յայտնի նշան էր թէ արթնցած էր Հայ ժողովուրդը իր դարաւոր քունէն, եւ հպարտ էր իր ազգային պատմութեամբ:

Կը հասնի Ինճիճեան, քննողի Չամչեանի, ազգային հնարասութիւնն ու աշխարհագրութիւնը աւանդելու հայ ժողովուրդին, պատկառելի չորս հատորներով Ստորագրութիւն հին Հայաստանեայց (1 հտ.), Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի (3 հտ.), զործեր՝ որոնցմով Հայ հնարասը կ'ամբողջացնէր Հայ պատմահօր մեծ վաստակին տեղադրական ու հնարասական մասը, որով հայկական հին կեանքին պատկերը, զործունէութեան վայրերը, զարգացումը, քաղաքակրթութիւնը լիակատար համայնապատկերի մը տակ կը ներկայանար նոր օրերու հայուն:

Կը յանդգնէ՞ տակաւին «Սիոն»ի խմբագիրը ըսել թէ «ազգային հայեցակէտէն

այդ շարժումը (այսինքն Մխիթարեան վերածնունդը) չունեցաւ փափաքուած արդիւնք»: Ո՞ր անհատը, կամ ո՞ր կեդրոնը մեր ազգին մէջ ահադեմական նկարագրով այսքան մեթոտիկ ու ծրագրուած զործ արտադրած է: Երբ ազգին կը պակսէին քերականութիւններ, բառարաններ, պատմութեան ու հնարասութեան ու աշխարհագրութեան գրքեր, ո՞վ է որ տուաւ անոնց լաւագոյնները առաջին անգամ աղբիւրն, ո՞վ էր որ արթնցուց ազգային դիտակցութիւնը, սէրը հանդէպ հայրենի լեզուին, ո՞վ ցոյց տուաւ ճշմարտութեան ուղին ու պաշտպանեց մեր Նախնեաց հաւատքին ուղղափառութիւնը ընդդէմ մուրամիտ քննադատներու:

Չենք զարմանար «Սիոն»ի խմբագրին այդ թիւը, կողմնակցական հոգեբանութեան վրայ, քանի որ աչքերուն վրայ լեզուեցած է կամովին վարագոյրը, չտեսնելու համար իրականութիւնները. որովհետեւ ան կը հետեւի հինէն մնացած աշխարհամուլ մտայնութեան մը: Մխիթարեանը մը վերածնած են, ու թէ եանները ազգ մը վերածնած են, ու թէ ինչպէս, պիտի տեսնենք աւելի ուշ. բայց նախ ամբողջացնենք վերածնունդի համայնապատկերը:

\*\*\*

Մխիթարեանները, այո՛, դարձան անցեալին, փոշիներուն տակէն հանեցին բովանդակ ազգի մը մատենագրութիւնը՝ թարթափելով հին ձեռագիրներուն վրայ մեղրաւաճառ տքնութեամբ: Այդ բանը ըրին նախ եւ առաջ, որովհետեւ հայկական վերածնունդի մը համար առաջին անհրաժեշտութիւնն էր այդ. բայց երբ ժամանակն հասաւ ու ժողովուրդը հասունցաւ, անոնք բացին նաեւ նոր ժամանակներու գրական դանձարանը: Չմնացին միջին դարու մէջ եւ ոչ ալ անցեալին խորերը թաղուեցան. առին հինէն ինչ որ հարկաւոր էր եւ սնունդ մատակարարեցին ծարաւահիւծ մտքերուն: Կարդացէ՛ք Ա. Չօպանեանի «Մխիթարեանց զործը» (Իր Գեմքեր հատորէն), ուր ան հեղինակաւոր քննադատութեամբ մը երեւան կը հանէ այն հրեայ գրքը՝ զոր Մխիթարեանները կատարած են. ահա թէ ինչ կ'ըսէ ան.

«Մեթոտիկ գործունէութեան, կանոնաւոր, գիտակից աշխատութեան ձկտումն է

որ Մխիթարի եւ իր յաջորդներուն գործը աւելի կատարեալ եւ յստակ կը կացուցանէ քան Ե. եւ ԺԲ. դարու հայ մտաւորականներուն գործը. Հայր Արսէն (Բագրատունի) եւ Հ. Եղուարդ Հիւրմիւզ շատ աւելի լայն չափով մը արեւմտեան մտածումն ու գեղեցկութիւնը ներմուծած են հայ մատենագրութեան մէջ, քան Ե. դարու բոլոր քարգմանիչները մէկանց, որոնց նիգը, կրօնական մտահոգութեան տիրապետուած, միակողմանի եւ սահմանափակ է եղած հարկաւորաբար, մինչդեռ Մխիթարեաններն ամբողջ արեւմուտքը բացին Հայ մտքին առջեւ՝ իր հին եւ նոր ամէն տեսակ նոյնութիւններով»:

Հին ճոխութիւններ են՝ լատին ու յոյն դասական գլուխ-գործոցները, որոնք արուեստի կատարեալ նրբութեամբ հայացան՝ Եղիա Թովմաճեանի, Բագրատունիի, Հիւրմիւզի, Ալիշանի, Ճարեանի, Ջախջախեանի, Գանթարեանի գրչին տակ: Հովնաթոս, Սովակիէս, Եսփիմէս, Դեմոսթէս, Պրոտարքոս, Որատիոս, Վիրգիլիոս, եւ զեռ եւրոպական գրականութիւններէն՝ Միլտոն, Դէյքսայիր, Լորա Պայրըն, Գոթեյլ, Ռասին, Կեսնէր, Կուպտոկ, Շիլլեր, Ալֆիէրի, Մեքսաքաղոյ, Մոնթի, Ֆոսթոյլ եւ ուրիշներ, բոլորն ալ իրենց բնագիրներուն արժանի դասական հայերէնով մը եկան հարստացնելու մեր թարգմանածոյ գրականութիւնը, արուեստի այնպիսի դիտակցութեամբ, որ պարզապէս հիացում կ'ազդէ հասկացողին ու զեռ հաճախելու գիտցողին: «Բագրատունիի եւ Հիւրմիւզի թարգմանութիւնները (կ'ըսէ Ա. Չօպանեան) առանց չովիւնութեան ո՛ր եւ է մեղադրանքի արժանանալու, կարելի է Պոտլերի եւ Լըքոնի տը Լիլի հանճարեղ թարգմանութիւններու հաւասար սեպել»:

Այս ձեռնարկը՝ զոր կատարեցին Մխիթարի յաջորդները, յոյն, լատին եւ եւրոպական գրական գեղեցկութիւններու ճաշակը ներմուծելու մեր մէջ, ապացոյց մը է՞ միթէ Մխիթարեաններու եւրոպական գարգացման եւ անհունօրէն պաշտեղեանքին՝ նոյնին հազարակից ընելու իրենց ազգակից եղբայրները: «Սիոն»ի խմբագիրը ինչպէս կրնայ ուրանալ այս հսկայ գիրը, որ միայն Ս. Ղազարի գրագէտները խաղացին ԺԹ դարու ընթացքին Եւրոպայի գեղեցկագիտական բովանդակ





արդիւնք է, եթէ ոչ Մխիթարեան վերածնունդին եւ Մխիթարեան գործունէութեան: Նմանապէս կրնա՞նք հարցնել թէ 1700էն մինչեւ օրս ի՞նչ կատարած են երուսաղէմ, Էջմիածին, որ կարելի ըլլայ համեմատութեան դրուել Ս. Ղազարու կատարածին հետ: Չունինք, այո՛, յաւակնութիւնը հաստատելու թէ Մխիթարեաններն ամէն ինչ րրած են ազգին վերանորոգման գործին, ազգային մշակոյթի պատմութեան մէջ, այլ թէ հիմնական դեր մը խաղացած են եւ ոչ լոկ «քովնտի աշխատանք մը», ինչպէս կ'ուզէ «Սիոն» ներկայացնել:

Անշուշտ եղան զրադէտ-բանաստեղծ եւ ազգային գործիչ կարգ մը ուրիշ անձնաւորութիւններ, որ Մխիթարեանց աշակերտներ չեն, ինչպէս Աբովեան մը, Բաֆֆի մը, Պարոնեան մը, Դուրեան մը, Սրիմեան Հայրիկ մը, Խ. Միսաքեան մը, Յ. Գ. Մամբեան մը, Գ. Արծրունի մը, Ռաֆայէլ Պատկանեան մը, Միքայէլ Նալբանդեան մը, Ստեփանոս Նազարեանց մը ( յիշելով միայն ազգային վերածնունդի նախկին շրջանի անձերէն ), սակայն ամենք բոլորն ալ ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան տակ են Մխիթարեաններու: Աբովեան՝ Մխիթարի հաստատութեան հմայքովը ապրած է, եւ թէեւ յաջողած է իրականացնել իր փափաքը անցնելու Վենետիկ եւ անդամակցել այդ Տան, որուն զրական փառքովը եւ զազափարականովը չլացած էր, բայց իր ազգասիրութեան կայծը առած է անկէ: Սրիմեան Հայրիկ Բազմատունիի եւ Ալիշանի դպրոցէն առած է իր շունչը, իր Հրախրակներու տաղաչափական արուեստը նմանութիւն մ'է Բազմատունիի հնարած հայկական չափին ու ոգիին. նոյնպէս Խաչատուր Միսաքեան եւ Յ. Գ. Մամբեան՝ Հիւրմիւզէն ու Բազմատունիէն սորված են իրենց գրարարն ու անոնցմէ առած դասականի շունչն ու հմայքը. Գրիգոր Արծրունի անցած է Վենետիկ՝ յատկապէս հայերէնի դասեր առնելու Ալիշանէն, եւ որուն հայրենասէր սրտի հնոցէն քերթացուցած է իր հոգին: Դարձեալ Ալիշանն էր՝ որ իր հայրենասիրական քերթումներով ստեղծեց այն խանդավառ մթնոլորտը եւ հոգին՝ որ հրահրեց ԺԹ. դարու ազգային գործիչներու գործունէութիւնը. Ահարոնեան յե-

շելով իր մանկութեան օրերու ոգեւորութիւնը՝ կ'ըսէ այնքան զգայուն կերպով. «սիրտս փղծկում էր Ու դու բարեկամ-կարգալիս»: Ու զեւ Մկրտիչ Էմին մը, Գեորգի Պատկանեան մը, Կ. Յ. Բասմաշեան մը կրած են տպաւորութիւններ Մխիթարեան հնախօսութեան ու պատմա-գրութեան, Չամչեանի եւ Ինճիճեանի հոգի ու տիրապետող ազդեցութենէն առնելով իրենց անդրադոյն ուսումնասիրութիւններուն առաջին եւ հիմնական ուղղութիւնները: Այսպէս խորագոյն ու անկեղծ քոն-նոյ մը պիտի տեսնէ եւ պիտի համոզուի թէ Մխիթարեանները եւ իրենց աշակերտները խիստապէս վերածնած են ազգ մը բովանդակ իր մտաւորական կազմաւորման մէջ: Բնականաբար վերածնունդը հետզհետէ պիտի ծաւալէր եւ պիտի սրտգրեւէր՝ մօտենալով աւելի ժողովուրդին, եւ ապրելով անոր կեանքը, արտայայտելով անոր ձկտումները, ինչպէս կատարուեցաւ Բաֆֆիով, Պարոնեանով, Ռաֆայէլ Պատկանեանով, ինչպէս կատարուեցաւ նոյնը Մամբեանով, Ծերենցով, Արիւարեանով, Վարուժանով:

Երբ կը մտածեմ որ Եղիշէ Դուրեան մը անգամ, - որ պարծանքն է Երուսաղէմի Միաբանութեան, թէեւ արմաշական մը ինքը, - կրած է մեծապէս ազդեցութիւնը Մխիթարեան զրականութեան՝ իր բանասիրական, հայադիտական ուսումնասիրութիւններուն մէջ, աւելցնելով Գաթրոնեանի, Տաշեանի, Ալիշանի, Չարբհանալեանի կատարած գիտական նուաճումներուն վրայ՝ եւրոպացի քննադատներու մէկ քանի նորագոյն տեսութիւնները, ի՞նչ մտքով «Սիոն» կը համարձակի համալսել չափեր տեսնել այդ Ս. Ղազարու հակայական գործունէութեան մէջ՝ որ կ'ընդգրկէ ընդհանուրը եւ ամբողջականը հայկական մշակութային կեանքի արտայայտութեան զանազան երեւոյթներուն:

\*\*\*

Երբ կը վերջացնենք այս տողերը, - տողեր՝ զոր ստիպուեցանք յանձնել մամուլի, ոչ թէ ինքնապարծութեան մը ըզգացումով, այլ Մխիթարի եւ իր գործին հանդէպ «Սիոն»ի անճիշտ վերաբերմունքին նկատմամբ մեր դիտողութիւնն ընե-

լու, - տխուր իրականութիւն մը կու գայ հարուածել մեր հոգին ի տես այն հոգեբանութեան եւ մտայնութեան՝ որ տակաւին կը շարունակուի Մեծն Մխիթարի մահէն երկուհարիւր տարի վերջն ալ՝ թէ այն անմահանուն Հայուն սկզբունքները՝ Կրօնի եւ Ազգի ճշմարիտ ըմբռնումին, հասկցումը չէ՝ անճշտօրէն «Լուսաւորչադաւան» կոչուած մեր հայ կղերէն: Եւ թէ՛ ասկէ կը ծագի բոլոր եղբակեան ողբերկութիւնը մեր եկեղեցական ու ազգային կեանքին, ասկէ առաջ կու գայ նաեւ անհասկացողութիւնը ճշմարիտ դիմադրման Մխիթարի եւ Մխիթարեաններու հոգւոյն ու գործունէութեան: Մեղի, ի հարկէ, ծանր էր եւ տհաճելի, անդրադառնալ այս հարցին չորջ՝ ճշտելու համար սխալ տեսութիւններ ու տեսակէտներ, չեղած իրենց ուղիղ զծէն, բայց պարտաւորուեցանք կատարել զայն յանուն ճշմարտութեան եւ արդարութեան: Մենք երբեք համեմատութիւններ չուղեցինք ընել Ս. Ղազարու եւ ուրիշ կեդրոններու միջեւ, (այդ արդէն պարզ է եւ ցուցուած գիտա-կից զրադէտներէ) այլ պարզապէս չեւտել՝

թէ անտեղի էր այն ելոյթը, որով «Սիոն» ժամանակով ու ազգային ընդհանուր դիտակցութեան մէջ նուիրականացած դնահատումին դիմաց, ճիշդ մը կը թափէ արժէքազրկելու Մխիթարեան զրական Վերածնունդի դերը:

Յուսաբեր-ի խմբադրութիւնը իր 8 Սեպտեմբեր 1949, թիւ 133-ով՝ «Այո, սա կայն, թէեւ» տիտղոսի տակ ներօրէն անդրադարձուցած էր արդէն, ինչպէս լսինք նախապէս, «Սիոն»ի յօդուածին անպատշաճ չեւտը եւ եղանակը, վերջապէս ընելով այսպէս. «Ահա թէ ի՞նչ ձեւով երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնական բերանը կ'ուզէ իր երախտագիտութիւնը յայտնել Մխիթարի եւ Մխիթարեաններու հանդէպ»: Երախտագիտութեան այդ զգացումը ազգին զանգուածէն թեւի իր մեծ Չաւակը եւ գէպի իր Վերագէպի իր մեծ Չաւակը արտայայտեց Հայ նորոգիչը, լիովին արտայայտեց Հայ Մամուլը. մենք «Սիոն»ի արտայայտութեան եղանակին մէջ՝ գէթ կը սպասէինք տեսնել միայն աւելի լոյս, աւելի իրատեսութիւն եւ աւելի անկեղծութիւն:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

## Գ Ի Տ Ե Մ . . .

Իմաստութեան քաջունը երբ՝ մեր երբեմնի, Սեպեմբեր մի խոնի հետ մտքիդ քառի, Թաքիի կրտուցն իր աղանակ ու յուսմանը՝ Ենթաշխարհիդ մթնոքեան մէջ, - անհուն ու խոր, Ուր դիզել եմ քո ներմոյշա՞՛ւն ունիւն, Բզգացումներիդ դեռ չաղարտուած, տեղերիդ թիւրքոյ, Գիտեմ, յայնժամ մարեմ պիտի կրքերդ առնեմ, Թոյնիդ՝ մեղրի, ոխիդ՝ սիրոյ պիտի փոխեմ... Դառնաս պիտի՝ անաչառ աչք, անարգել դուռ Եւ հրաւերք աներկնրուանք ու կաշրկըռը, Փրշելով դեմս՝ եղբայրական, համեմատ, բայց լի Միտքը մեր նրշիրական Արարատի, Որ քողել եմ՝ որպէս աշակ ու յաւանք արեան... Նախնիքը մեր, ի գիւն աշխարհի քաղաքս արեան... Իմաստութեան քաջունը երբ՝ մեր երբեմնի, Սեպեմբեր մի խոնի հետ մտքիդ քառի...

Թեհրան

ՈՍՏԱՆԻԿ